# ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
## COMMISSION OF THE PUBLIC COUNCIL OF RA
## КОМИССИЯ ОБЩЕСТВЕННОГО СОВЕТА РА

ՀՀ, Երևան, 0010, Վ.Սարգսյան 26/1, «Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, հեռ. 37410 ֆաքս., հեռ. 523448, 523405
Republic of Armenia, 0010, Yerevan, V.Sargsyan str. 26/1, "Erebuni plaza" business center, tel. 523448, 523405
Республика Армения, 0010, Ереван, ул.В.Саркисяна 26-1, "Эребуни плаза" бизнес-центр, тел. 523448, 523405


«26» հուլիսի 2013թ.
№ 10

ՀՀ Բնապահպանության նախարար
պարոն Ա.Հարությունյանին

*Հարգելի պարոն Հարությունյան*

Ի կատարումն մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի նիստի 24.13/163148/-13 արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետի հանձնարարականի, ներկայացնում եմ Արարատյան դաշտավայրի լուծարման և կոնսերվացման ենթակա խորքային հորատանցքերի լուծարման և կոնսերվացման եղանակները ու դրանց կատարման համար պահանջվող միջոցների վերաբերյալ առաջարկությունները ու հաշվարկները:

- Մեկ խորքային հորի, միջինը 100մ խորությամբ, լուծարման համար անհրաժեշտ է այն խցանել ամբողջ խորությամբ, համապատասխան մշակված եղանակով և նյութերով, որի համար կպահանջվի մոտ 2500 հազ. դրամ:
- Խորքային հորերի կոնսերվացումը առաջարկվում է իրականացնել դրանց ելքային՝ վերգետնյա մասը փակելով (զոդումով) պողպատյա թիթեղով և շրջափակելով բետոնյա կաղապարով, որի դեպքում մեկ հորի կոնսերվացման համար՝ կախված հորից դուրս եկող խողովակի տրամագծից ու նրա վրա առկա մետաղական մասերից, կպահանջվի 150 – 260 հազ. դրամ:

Կից ներկայացնում եմ հորերի կոնսերվացման և լուծարման համար կազմված նախահաշիվները և առաջարկվող կոնսերվացման եղանակի գծագրերը – 1 գիրք:

*Հարգանքով*

ՀՀ ՀԽ գյուղատնտեսական և բնապահպանական
հարցերի հանձնաժողովի նախագահ Յու.Ջավադյան

Մուտք № Կ-2197
29 07 13

606
31.07.13թ